

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԼՈՅՍԸ ԽԱՒԱՐԻՆ ՄԷՁ

Վերջին տարիներուն Հայաստանի մէջ կը խտանան մտահոգիչ երեւոյթներ, որոնք կ'արձանագրեն ոչ թէ պարզ առօրեայ քաղաքական դժբախտութիւններ, այլ խոր՝ հոգեւոր ու արժէքային ճգնաժամ: Պետական իշխանութիւնը, որ ըստ սահմանադրական կոչումին պարտի ապահովել քաղաքացիներուն խղճի ազատութիւնը եւ յարգանքը դէպի ազգային հոգեւոր ժառանգութիւնը, այսօր աւելի ու աւելի կը խոտորի դէպի հակառակ ուղղութիւն. կը վերածուի այն ոյժին, որ կը փորձէ թուլացնել, նսեմացնել եւ խարխլել Հայ Առաքելական Եկեղեցւոյ դերը ազգային կեանքէն ներս:

Հայոց Եկեղեցին դարեր շարունակ եղած է մեր ժողովուրդի հոգեւոր ամրոցը՝ ժամանակի փոթորիկներու դէմ: Երբ թագաւորութիւններ կործանած են, երբ բռնապետութիւններ տիրապետած են հայ հողերուն, երբ օտար դռներու առջեւ ազգը մնացած է ապաստարանազուրկ, միշտ Եկեղեցին եղած է միակ հաստատութիւնը, որ պահած է ժողովուրդի միասնականութիւնը, լեզուն, գրականութիւնը եւ բարոյական նկարագիրը: Եւ այսօր, երբ Հայաստան ինքզինք կը յորջորջէ անկախ եւ ժողովրդավար պետութիւն մը, ցաւով պիտի արձանագրենք, թէ նոյն այդ պետութիւնը կ'օգտագործէ իր իշխանութիւնը՝ իր իսկ հոգեւոր հիմերը խախտելու:

Պետական կառոյցներու, որոշ պաշտօնեաներու եւ իշխանութեան մօտ կանգնած շրջանակներու կողմէ կը տարածուին անվայել արտայայտութիւններ ու կոչեր, որոնք ուղղուած են Եկեղեցւոյ հեղինակութիւնը կործանելուն: Մամուլին մէջ եւ յատկապէս ընկերային ցանցերու վրայ կը տարածուին անարգանքի, կասկածի եւ ծաղրի լեզուով յայտարարութիւններ՝ եկեղեցականներու եւ հոգեւոր կեանքի դէմ: Եկեղեցիներու եւ վանքերու սեփականութեան հարցերը կը շահարկուին քաղաքական նպատակներով, եկեղեցական արարողութիւններու վրայ կը բանեցուին սահմանափակումներ եւ խոչընդոտներ: Այս ամէնը միացեալ կը կազմեն համակարգուած քաղաքականութիւն մը՝ նպատակ ունենալով խարխլել Հայ Առաքելական Եկեղեցւոյ վարկը՝ այդպիսով զայն դուրս բերելու հասարակական կեանքէն:

Սակայն Եկեղեցին, իբրեւ Քրիստոսի Մարմին, չի կրնար վերածուիլ միայն քարեղէն կառոյցի: Անվերջ դարերու ընթացքին ան կրցած է ապրիլ եւ ապրեցնել առանց պետական օժանդակութեան, առանց իշխանական հովանաւորութեան, որովհետեւ իր կեանքի աղբիւրը ոչ քաղաքական է, ոչ տնտեսական, այլ՝ հոգեւոր: Եկեղեցին չի պատկանիր իշխանութեան, այլ՝ Աստուծոյ: Եւ անոր հալածանքը, ի վերջոյ, հալածանք մըն է Աստուծային ճշմարտութեան դէմ:

Արդար է հարցնել. ի՞նչ կը շահի պետութիւնը, երբ կը փորձէ թուլցնել Եկեղեցին: Կարո՞ղ է արդեօք գոյատեւել այն ժողովուրդը, որ կը մերժէ իր հոգեւոր արմատները: Պատմութիւնը կը վկայէ՝ երբ հայը հեռացած է իր Եկեղեցիէն, կորսնցուցած է իր ինքնութիւնը, իսկ երբ կառչած է Սուրբ Սեղանին, յաղթած է ամենամեծ փորձութիւնները: Ահա թէ ինչու Եկեղեցւոյ դէմ ուղղուած մերօրեայ պայքարը պէտք է հասկնալ ոչ թէ որպէս

անհատական կամ վարչական ընդհարում, այլ որպէս վտանգաւոր յարձակում մեր ժողովուրդի գոյութեան եւ ինքնութեան դէմ:

Այսօր մեր Սուրբ Եկեղեցին կրկին կանգնած է հալածանքի ճանապարհին, բայց նաեւ՝ վկայութեան: Ան կը վկայէ, թէ ճշմարտութիւնը երբեք չի լռէր, նոյնիսկ երբ իշխանութիւնները կը սպառնան: Եւ եթէ անգամ փորձեն խլել իր ձայնը մամուլէն, դպրոցէն կամ հրապարակէն, ան պիտի շարունակէ խօսիլ՝ խորաններէն, խաչքարերէն, ուխտավայրերէն եւ իր գաւակներու աղօթքէն: Որովհետեւ Եկեղեցւոյ լեզուն աղօթք է, ոչ քարոզչութիւն, իր գէնքը՝ խաչն է, ոչ կուսակցական դրօշակը:

Եկեղեցւոյ դէմ ուղղուած այս հալածանքը ի վերջոյ կը դառնայ դատաստան՝ իշխանութեան դէմ: Ժողովուրդը, որուն հոգեւոր աչքերը դեռ չեն փակուած, պիտի գանգանէ ճշմարիտը կեղծէն: Եւ պիտի յիշէ, թէ Եկեղեցին չ'ապրիր իշխանութեամբ, այլ Աստուծոյ կամքով: Մեր պարտքն է այսօր կանգնիլ մեր Սուրբ Եկեղեցւոյ կողքին՝ ոչ որպէս ընդդիմութիւն, այլ որպէս հաւատացեալ ժողովուրդ, որ գիտէ թէ առանց Եկեղեցւոյ Հայաստան այլեւս Հայաստան չէ:

Այս օրերուն, երբ խաւարը կը փորձէ պատել մեր հոգեւոր երկինքը, մենք ամէնքս կոչուած ենք աւելի զօրաւոր աղօթքի, հաւատքի եւ միասնականութեան: Եկեղեցւոյ պաշտպանութիւնը քաղաքական դիրքորոշում չէ, այլ հոգեւոր պարտք: Հետեւաբար, սիրելի ընթերցողներ, եկէ՛ք վերամիաւորուինք մեր Սուրբ Եկեղեցւոյ շուրջ՝ մեր խղճով, մեր աղօթքով եւ մեր հաւատքով: Որովհետեւ Եկեղեցին այն լոյսն է, զոր մարել չեն կարող ո՛չ իշխանութիւններ, ո՛չ բռնութիւններ, ո՛չ ալ ձերբակալութիւններ ու բանտարկութիւններ: Եւ որքան ալ հալածեն զայն, անոր ճշմարտութիւնը պիտի շողայ աւելի ուժգին, մինչեւ որ Հայաստան վերագտնէ իր հոգեւոր շունչը եւ իր Աստուածատուր խաղաղութիւնը:

Ն. Վ.

